

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N - Ա

<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ մեկամսյա ժամկետում «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 2007 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված անհատույց օգտագործման N 56/007 պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր՝ նախատեսելով, որ դրա նոտարական վավերացման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ երկամսյա ժամկետում՝

1) սահմանված կարգով ապահովել «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 35/1 (նախկինում՝ Սպանդարյան փողոցի N35) հասցեում գտնվող 21851024 դրամ սկզբնական արժեքով ու 2239.1 քառ.մետր ընդհանուր մակերեսով 2-րդ մասնաշենքի (իրավունքի գրանցման 2007 թվականի նոյեմբերի 14-ի N 2348439 օգտագործման վկայական), Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի 2-րդ թաղամասում գտնվող ուսումնական մասնաշենքից՝ 8873500

դրամ սկզբնական արժեքով ու 1811.5 քառ.մետր ընդհանուր մակերեսով տարածքի (իրավունքի գրանցման 2005 թվականի ապրիլի 5-ի N 1461358 օգտագործման վկայական) և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Տերյան փողոցի N 1^ա հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքից՝ 5653200 դրամ սկզբնական արժեքով՝ 1031.6 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքի ու 201 քառ.մետր հրաձգարանի (իրավունքի գրանցման 2005 թվականի ապրիլի 22-ի N 1267425 օգտագործման վկայական) (այսուհետ՝ գույք) հանձնման – ընդունման աշխատանքների իրականացումը,

2) ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված գույքի հետագա օգտագործման վերաբերյալ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՅ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի մոտ 2016թ. նոյեմբերի 22-ին կայացած քննարկման արդյունքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության վարչապետի 30.11.2016թ. N 02/14.1/19516 հանձնարարականի համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է լուծարվեն «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մասնաճյուղերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը շենքեր և շինությունների մասեր հանձնելու մասին» N 1431-Ա որոշման Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում գտնվող ուսումնական հաստատություններին ամրացված ուսումնական մասնաշենքերից որոշակի տարածքներ կամ առանձին մասնաշենքեր հետ են վերցվել և անհատույց, օգտագործման իրավունքով հանձնվել են «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը, և հետագայում էլ դրանք հանձնվել են տվյալ մարզերում ստեղծված մասնաճյուղերին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվում է մեկամսյա ժամկետում «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 2007 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված անհատույց օգտագործման N 56/007 պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվում է երկամսյա ժամկետում ապահովել «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել առաջարկություն նշված գույքի հետագա օգտագործման վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**ՀՀ կառավարության «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» որոշման նախագծի վերաբերյալ
դիտողությունների և առաջարկությունների մասին**

N/ N	Գերատեսչությունների անվանումը	Առաջարկություններ և դիտողություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
1	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>Առաջարկում է</p> <p>1. Որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին կետում «Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «Սպանդարյան փողոցի N 35 հասցեում, ներկայիս» բառերը՝ նկատի ունենալով՝ ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1431-Ա որոշման դրույթները:</p> <p>2. Նախագծի 2-րդ կետում «պետական գույքի կառավարման վարչության պետին» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո» բառերը:</p> <p>3. Նախագծում անհրաժեշտ է վերանայել կետերի համարակալման հաջորդականությունը:</p>	<p>1. Ընդունվել է, Որոշման փոփոխված նախագծի 2-րդ կետում կատարվել է լրացում:</p> <p>2. Ընդունվել է, որոշման նախագծում կատարվել է լրացում:</p> <p>3. Ընդունվել է:</p>
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 20.02.2017թ. h.01/22.22/1171-17	<p>Նախագծով նախատեսվում է «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 35/1 հասցեում գտնվող 2239.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով 2-րդ մասնաշենքը ամրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, սակայն Նախագծի 4-րդ կետով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1431-Ա որոշման 1-ին կետի «ա» ենթակետը, որով ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով է հանձնվել Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Սպանդարյան փողոցի N 35 հասցեում գտնվող շենքային համալիրի 2-րդ մասնաշենքը: Առաջարկում է որոշման նախագծում կատարել համապատասխան շտկում:</p>	<p>Աշտարակի քաղաքատեղի 2010թ տեղեկանքի համաձայն Սպանդարյան 35 փոխվել է և ներկայիս ճիշտ հասցեն է ք. Աշտարակ, Տիգրան Մեծի 35:</p>
3.	ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 28.02.2017թ.	<p>Առաջարկում է.</p> <p>1. Որոշման նախագծի նախաբանում հղում կատարել նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածին, ինչպես նաև «Պետական</p>	<p>Չի ընդունվել: ՀՀ կառավարության աշխատակազմի</p>

<p>N01/22.22/1171-17</p>	<p>կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին, 2. Որոշման նախագծի հերթական համարողում նշված իրավական ակտի բնույթը մատնանշող «Ն» տառը փոխարինել «Ա» տառով, քանի որ նախագիծը կրում է անհատական բնույթ, 3. Որոշման նախագծի 3-րդ կետը շարադրել տևյալ բովանդակությամբ. <3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 2007 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված անհատույց օգտագործման N 56/007 պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ համաձայնագրում նախատեսելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Կրթության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին:»:Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Որոշման նախագծի 1-ին կետում նշված ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի 35/1 հասցեում գտնվող 2239.1 քառ.մետր մակերեսով ուսումնական մասնաշենքը հանձնված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը որպես «Աշտարակի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ին ամրացված անշարժ գույք, որի հասցեն համաձայն սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի գրանցված է ՀՀ Արագածոտնի մարզ, քաղաք Աշտարակ, Տ.Մեծի 35:</p>	<p>իրավաբանական վարչության առաջարկությամբ որոշման նախագծի նախաբանում հղում է կատարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին: 2.Ընդունվել է, 3.Ընդունվել է. Որոշման փոփոխված նախագծի 2-րդ կետը առաջարկին համապատասխան շարադրվել է նոր խմբագրությամբ:</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե 2017-02-17 N ՄՍ/1214-17</p>	<p>Առաջարկում է Նախագծի 1-ին կետում «<շվագարան>> բառը փոխարինել «<հրաձգարան>> բառով, նկատի ունենալով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 2005 թվականի ապրիլի 22-ի N 1267425 վկայականի տվյալները:</p>	<p>Ընդունվել է, որոշման փոփոխված նախագծի 2-րդ կետում «շվագարան» բառը փոխարինվել է «հրաձգարան» բառով:</p>
<p>«Կրթության ազգային ազգային ինստիտուտ» ՓԲԸ 2017-02-13 N 17/1762-17</p>	<p>Առաջարկություն և դիտողություն չունի</p>	